

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱՔԱՐԾՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ  
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«24» դեկտեմբերի 2024թ.

2024 թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

**Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.**

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին» N 1-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքի փոփոխության հաստատում.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 2-Լ որոշմամբ հաստատված հաստիքացուցակի փոփոխության հաստատում:

**Քվեարկությանը մասնակցել են՝**

- Դ. Խուրաթյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ
- Ա. Հովհաննիսյան ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
- Ք. Ղալեչյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ

Ն. Հովակիմյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Ա. Պապիկյան

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները ժամանակավոր կատարող, ՀԽ անդամ

Ա. Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով), ՀԽ անդամ

**Քվեարկությանը չեն մասնակցել՝**

Ա. Ադիլխանյան

ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ

Ա. Ավանեսյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Ե. Վարդանյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

Ս. Թովմասյան

ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

**Քվեարկությունը համարվում է կայացած:**

**Քվեարկության արդյունքները՝ 6 կողմ, 0 դեմ:**

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին» N 1-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքի փոփոխությունը.

2. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 2-Լ որոշմամբ հաստատված հաստիքացուցակի փոփոխությունը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Դ. Խուդաթյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝

Ա. Հայրապետյան